ՀԱՅՐ ՅՈՒՍՏԻՆ ՊՈՊՈՎԻՉ

ՎԵՐԱԾՆՎԱԾ ԱՆՁԻ ԻՄԱՑԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ Ս. ՄԱԿԱՐ ՄԵԾԻ[1]

«Աստուծոյ միացեալ ընդ ապրուածս ճանաչի յաստուածոց»[2]:

Մարդկային անձնավորության ապրվածացումը մեծապես կախված է նրանից, թե ինչպես է Աստծո պատկերով ստեղծված մարդու հոգին ազատվում մեղքի ու սատանիզմի կապանքներից: Աստվածային շնորհը մարդու մեջ վերականգնում է Աստծո պատկերը՝ Աստվածամարդու կյանքին մարդու ունեցած մասնակցության շնորհիվ: Վերածնված նոր անձնավորությունն իրեն զգում ու ճանաչում է իբրեւ Աստծո պատկերով ստեղծված մի անձնավոր գոյություն. նա իրեն վերագտնում է Քրիստոսի շնորհիվ: Այսպիսով, նա սովորում է ճանաչել քրիստոնեական մարդաբանության իմացաբանական այն մեծ խորհուրդը, ըստ որի՝ Աստծո գիտությունը ներկա է բացառապես մեր այն գիտակցության մեջ, որ մենք ստեղծվել ենք Աստծո պատկերով՝ Քրիստոսի մեջ: Աստվածացված-սրբացած անձնավորությունը մուտք է գործում Սուրբ Երրորդության խորհուրդների գիտության մեջ, հենց որ ճանաչում է Սուրբ Երրորդության պատկերն իր հոգեւոր կառուցվածքի մեջ: «Նա, ով կարողացել է ճանաչել իր սեփական հոգու արժեքը, կկարողանա ճանաչել նաեւ Աստծո զորությունն ու խորհուրդները»[2]: Ահա այս է պատճառը, որ սուրբ հայրը հաստատում է, թե մեր բնությունը «Սուրբ Երրորդության խորհուրդն է»[3]՝ հաստատելով այսպիսով ճանաչել «Սուրբ Երրորդությունն անձի մեջ առկա Սուրբ Երրորդության միջոցով»[4]: Աստվածային եւ մարդկային բնությունների՝ առանց բաժանման եւ առանց խառնակման միության կատարյալ օրինակը մեզ տրվել է Աստվածամարդու՝ Հիսուս Քրիստոսի անձի մեջ: Սակայն նրա արարչական զորության ցանկացած արարք աստվածամարդկային բնույթ ունի: Մարդկային գիտության միակ չափանիշն այսպիսով Աստվածամարդու անձն է:

Նրա համար, ով իր ամբողջ միտքն ու գիտակցությունը կենտրոնացնում է

1 «Ἡ Γνωσιολογία της ἀναγεννημενης προσωπικότητας», Աթենք, 1926:

2 **Ս. Մակար Եգիպտացի**, Ճառ ԻԷ 1, PG 36, 693 B (այսուհետեւ՝ Ճառ): Հմմտ. Ճառ ԼԲ 11, PG 36, 741 A. «Աստվածությունն ամենուրեք է, եւ նրան կարելի է գտնել ամեն տեղ: Եթե Նրան փնտրելու լինես երկնքում, Նա այնտեղ է՝ հրեշտակների մտքերում: Եթե փնտրելու լինես երկրի վրա, այստեղ է Նա՝ մարդկանց մտքերում»: Հմմտ. նաեւ **Ս. Գրիգոր Նյուսացի**, Ճառ Աստծո պատկերի եւ նմանության մասին, PG 44, 1341 A. «Աստված քեզ ստեղծել է իր երրորդութենական գոյության պատկերին եւ նմանությանը համապատասխան, ինչպես եռյակի մեջ հայտնի համագոյակից միակ: Եթե լավ քննես, կարող ես այնտեղ տեսնել, ինչպես հայելու կամ նախատիպի մեջ, այն ամենը, ինչ կարելի է ամենայն բարեպաշտությամբ խոսել Աստծո մասին»:

3 Անդ, PG 36, 1337 C:

4 Անդ, PG 36, 1340 BC: Հմմտ. **Ս. Աթանաս Ալեքսանդրացի**, Ցաղագս մարդեղութեան, PG 26, 116 AB, **Մաքսիմոս Խոստովանող**, «Ծանիր զքեզ»-ի վերաբերյալ, PG 91, 968 B. «Ինքնաբավ եւ ճշգրիտ հասկացողությունը դեպի Աստված տանող իմաստություն է ընծայում»:

մեղքի վրա, Աստված մնում է մի արտաքին իրականություն՝ սպառնալի եւ ահեղ: Ահա թե ինչու Քրիստոսի մեջ կյանքի եւ գիտության աստվածամարդկային մեթոդն սկսվում է Աստծո հետ մարդու ներքին եւ հոգեւոր միությամբ: Հոգին միանում է հոգու հետ այն աստիճան, որ Քրիստոս եւ մարդ այլեւս «մեկ եւ միակ հոգի են կազմում»[5]: Այսպիսի անձնավորությունը կարող է իսկապես հասկանալ եւ ըմբռնել աստվածամարդկային ճշմարտությունը, ըստ որի՝ «Աստծո արքայությունը ձեր մեջ է»[6]: Աստված բռնակալ կամ թագավոր չէ, որ կարող է իր իշխանությունը դրսից բռնի ուժով հաստատել. ո՛չ, արքայությունը գտնվում է մեր սեփական անձի ներսում, մեր հոգում, մեր մտքի եւ մեր ազատ կամքի մեջ: Ահա այսպես է, որ Նա կարող է թագավորել մեր բնական հոգու վրա ամբողջությամբ, քանզի այն ստեղծվել է Նրա պատկերով:

Այսպիսով, անձնավորության եւ գիտության վերանորոգությունը կարող է բխել մարդու եւ Քրիստոսի միությունից, եւ այս է պատճառը, որ Ս. Մակարը փրկաբանական խնդիրն աղերսում է Քրիստոսի մարդեղությանը եւ փրկված անձի հոգուն: Տվյալ անձի ամբողջ կյանքն ու միտքը կենտրոնանում են ինքնահաստատման՝ իբրեւ Աստծո պատկերի փաստի շուրջ, նրա բոլոր անդամների եւ հոգեմարմնավոր զգայարանների սրբացման վրա:

Բայց քանի որ միտքը սահմանափակված է մարմնով, նրա կազմակերպմամբ եւ անձի կյանքով, ուրեմն, բնականաբար, հանգում ենք այն եզրակացության, որ քրիստոնեական մաքուր իմացությունը բխում է օրգանապես վերածնված անձից (իբրեւ ֆիզիկական գոյություն-ծնթգր. թրգմն.): Նախքան Քրիստոսի ծնունդը, մարդկային միտքը ծառայում էր մեղքին: Քրիստոսից սկսած՝ մաքուր իմացությունը կարող է դառնալ անձնական հաստատում եւ ապրված իրականություն յուրաքանչյուրի համար, ով միանում է Քրիստոսի Սուրբ Մարմնին՝ Եկեղեցուն: Անձնավորության եւ մտքի խորհուրդներն ուրեմն գտնվում են Եկեղեցում: Այսպիսով անձը դառնում է Քրիստոսի մարմնին[7] մարմնակից՝ առաքինությունների եռյակի շնորհիվ: Այս դեպքում իմացությունը դառնում է արդյունք այն ընդհանրական եւ արարչական զգայարանի, որն անձի գիտության օրգանների շնորհի մեջ է եւ ապրում է Քրիստոսի Եկեղեցում: Եթե ուզում ենք պեղել քրիստոնեական իմացության ծնունդը, հարմար է այն փնտրել շնորհալից այս ճգնակեցական եռյակում, որն էլ վերականգնում է անձը[8]:

Իր բնության խորքում իմացությունն էթիկազոյաբանական ակտ է, այսինքն՝ մի արարք, որի մեջ խորհրդավորաբար գործում է ճանաչողի եւ ճանաչվողի, ենթակայի եւ առարկայի միությունը: Դեպի քրիստոնեական գիտություն առաջնորդող միակ մեթոդը ենթակայի եւ առարկայի միությունն է[9]՝ Սուրբ Հոգու շնորհի միջնոր-

5 «Մտքի ազատության մասին», ԺԱ, PG 36, 944 A: Հունարեն բնագրում՝ «Τὸ πνευμα ἑνώςεται μὲ τὸ πνευμα ὡσπου Χριστὸς καὶ ὁ ἄνθρωπος νὰ γίνουν «ἓν πνευμα» :

6 Ղուկ. ԺԷ 21: Հմմտ. Ճառ Ժ, 32-33, PG 36, 597 A:

7 Տե՛ս **В. И. Несмелов,** Наука о человеке, Казань, 1907, էջ 292-294:

8 Եփես. Գ 6:

9 Հունարեն բնագրում՝ «στὴ συνένωση του ὑποκειμένου μὲ τὸ ἀντικείμενο»:

դությամբ եւ բարոյական եռյակի վարժության շնորհիվ՝ Քրիստոսով եւ նրա շնորհով ապրվող կյանքի մթնոլորտում[10]: Առաքինությունների այս բարոյական եռյակի շնորհիվ գիտության ենթական մեծանում-հասնում է մինչեւ Սուրբ Երրորդության գիտության: Այստեղ ենթակայի եւ առարկայի հարաբերությունն անձնական է՝ շնորհալից ճգնությամբ ձեռք բերված էթիկա-կրոնական մի հարաբերություն[11]: Միայն քրիստոնեական իմացաբանության, այսինքն՝ ըստ ենթակայի եւ առարկայի միջեւ առկա շնորհի միության բարոյահոգեւոր մեթոդով է, որ կարող ենք խուսափել իմացաբանական պարզունակ իրատեսության ողբերգական ճակատագրից՝ անդրանցական էմպիրիզմից[12], անդրանցական ռացիոնալիզմից[13] կամ քննադատությունից[14]:

Վերանորոգված անձի զարգացումը բարոյական եռյակի միջոցով մինչեւ Սուրբ Երրորդություն ներկայանում է երեք հիմնական ասպիճանով.

ա. Առաջինը բաղկացած է մեղքի մեջ ապրող մտքից եւ հոգուց հրաժարվելուց. հրաժարում, որ վերաբերում է անձի բոլոր տեսակի մեղքերին.

բ. Երկրորդ ասպիճանին անձն զգում է, որ իմացության իր սեփական օրգանները, ասպվածային շնորհի եւ առաքինությունների բարոյական եռյակի շնորհիվ, դառնում են ընկալունակ ճշմարիտ գիտության նկատմամբ.

գ. Երրորդ ասպիճանին անձն ամբողջությամբ սրբվում է մեղքից եւ դառնում «ակն համայն»[15], այսինքն՝ աչք, որ տեսնում է իր պաշտած ասպվածության անքննելի խորհուրդները:

Որոշ դեպքերում անհնար է այս վերջին ասպիճանը բացատրել իբրեւ հավատի առարկայի տրամաբանված գիտություն, այլ ավելի շուտ իբրեւ հավատի ենթակայի՝ մարդու՝ շնորհի մեջ իրական միություն այն Ասպծո հետ, որին նա հավատում է: Կամ էլ, այլ խոսքով ասած, ենթական ընկալում է իր հավատի առարկան իբրեւ իր իսկ անձի կենտրոնը. այն ինքնաճանաչողությամբ եւ ինքնահայեցությամբ սահմանվում է իբրեւ Ասպծո պատկեր: Բայց ըստ Սուրբ Մակարի՝ միայն լուսավորվածները կարող են այդ ասպիճան բարձրանալ, որովհետեւ «նրանք, ովքեր լուսավորված են, տեսնում են հոգու պատկերը»[16]: Ահա այս մարդիկ են իսկապես ճանաչում մարդկային բնությունը, քանզի նրանք իրենց հոգին իբրեւ Ասպծո պատկերով արարված են ընկալում եւ դրա մեջ տեսնում Ասպծուն: Նրանց հոգեբանությունն իրոք ապրված ու շնորհալի է: Ասպծո պատկերով ստեղծված հոգու խորհուրդը նրանց հայտնում է Սուրբ Հոգին ինքը: «Ո՛չ իրենց իմաստությամբ հայտնի իմաստունները, ո՛չ իրենց

10 Հմմտ. **Կղեմես Ալեքսանդրացի**, Ստրոմատներ Դ, 7, PG 8, 1265 B. «Մտային իմաստության (Γνῶσις λογική) հիմքը (θεμέλιος) սրբազան եռյակն է՝ հավատ, հույս եւ սեր»:

11 Հմմտ. Ա Կորնթ. ԺԳ 1-13, Եփես. Գ 14-19, Փիլիպ. Գ 7-11, Բ Պետրոս Ա 2-9:

12 Այս տեսության հիմնական ներկայացուցիչներն են փիլիսոփաներ Բեկոնը, Լոկը, Բեռկլին եւ Հյումը:

13 Իմացաբանական այս տեսությունը մշակվել է Դեկարտի, Սպինոզայի եւ Լայբնիցի կողմից:

14 Իմացաբանության մեջ քննադատական այս մոտեցման հեղինակը Կանտն է:

15 Հուն. բնագրում՝ «ὅλη ὀφθαλμός» :

16 Ճառ Է 6, PG 36, 528 A:

գիտությամբ փայլող գիտնականները չեն կարողացել հասկանալ հոգու նրբությունը կամ էլ այն սահմանել ըստ էության, այլ միայն նրանք, ում Սուրբ Հոգին հայտնել է դրա մասին գիտելիքը եւ ովքեր ունեն հոգու մասին ճշգրիտ գիտությունը»[17]:

Մարդու հիմնական գործը, հետեւաբար, պետք է լինի իր մտքի սրբությունը գործադրելը, որպեսզի «նրա միտքն ամբողջությամբ իր վրա վերցնի այն հոգսն ու մտահոգությունը, որ նրան կպատճառի հոգու հոգեւոր էության փնտրտուքը եւ կարողանա առանց ձախողվելու ընդունել եւ համակ ուշադրությամբ ընկալել Սուրբ Հոգու գալուստը»[18]: Քրիստոսասեր հոգու ամբողջ խնամքը պետք է լինի Աստծո պատկերով ստեղծված իր էությունը զարդարել՝ «իրագործելով առաքինություններին վերաբերող պատվիրանները, ստանալով Հոգու երկնային գեղեցկությունը եւ մասնակցելով Քրիստոսի սրբությանն ու մաքրությանը»[19]:

Իբրեւ Աստծո պատկերով ստեղծված հոգու մի մաս՝ միտքն Աստծո մեջ է, որտեղ եւ գտնում է իր անկորնչելի արժեքը: Այսպիսով, Սուրբ Մակարը կարող է հայտարարել, որ՝ «միտքն Աստվածության գահն է, եւ Աստվածությունն էլ մտքի գահն է»[20]: Մտքի սրբազան նշանակությունն իր ողջ շուքով գահակալող Աստվածությունն ընդունելն է, որն իշխում է մտքի գիտության բոլոր հոդվածների վրա: Քրիստոս եկավ մարդու մտքում գահակալող Սատանային հեռացնելու եւ մտքից «ինքն իր համար գահ պատրաստելու»[21]՝ այդ հոգեւոր արքայությունը ղեկավարելու եւ դրա մեջ թագավորելու ակնկալիքով: Քրիստոս սրբեց աշխարհի մեղքը. սա իմացաբանական նշանակություն է ստանում, որովհետեւ «Նա սրբեց աշխարհի մեղքերը, այսինքն՝ խցանեց մեր հոգու պիղծ մտքերի աղբյուրը»[22]: Մարդու հոգին ամբողջապես կրում է «մեղքի այդ անբուժելի վերքը, վատ ու պիղծ մտքերի աղբյուրը»՝ Ադամի մեղսագործության արդյունքը[23]: Սակայն վերածնված անձի հոգու մեջ շնորհի եւ առաքինությանց եռյակի միջոցով «այդ աղբյուրը, որ պիղծ մտքեր էր բխեցնում, Հիսուսի զորությամբ խցանվեց»[24], քանզի միայն «Տիրոջով է հնարավոր Աստծուն տեսնող եւ մարմինն առաջնորդող միտքը բուժել», որը վնասված եւ մթնած է մեղքի պատճառով[25]:

Մաքուր գիտությունը հայտնվում է իբրեւ բնական պտուղը Քրիստոսով սրբված մտքի: Աստվածաճանաչողության յուրաքանչյուր արարքի համար Քրիստոսին հավատացողը կարիքն ունի Սուրբ Հոգու գործակցության եւ առաջնորդության, որովհետեւ «ինչքան որ Նրա մեծությունն է անըմբռնելի, այդքան էլ՝ նրբութ-

17 Ճառ ԽԹ 4, PG 36, 816 B: Հմմտ. Ճառ ԺԵ 14-15, PG 36, 585 C, Ճառ ԻԱ 4, PG 36, 548 A:

18 Ճառ Թ 10, PG 36, 537 BC:

19 Անդ:

20 Ճառ Զ 5, PG 36, 521 B:

21 Անդ: Դատմական ամենացայտուն օրինակը մեզ տալիս են առաքյալներն իրենց կյանքով: Քրիստոս «աստվածային զորությամբ դասներկու Առաքյալների վրա ուղարկեց Միխիթարիչ Սուրբ Հոգուն, որը եկավ նրանց մտքերի գահույքների վրա բազմելու» (Անդ, PG 36, 521 C):

22 Ճառ Ի 5, PG 36, 652 D: Հմմտ. Անդ 5, 653 B:

23 Անդ, 4, 652 C:

24 Անդ: Հմմտ. Ճառ ԻԶ 23, PG 36, 689 D:

25 Ճառ Ի 4-5, PG 36, 652 B:

յունը»[26], քանզի ոչ ոք չգիտե Աստծո գործերը, եթե ոչ Աստծո Հոգին[27]: Քրիստոս «դեպի ճշմարտության գիտություն» առաջնորդող ճանապարհն է: Քանի որ Սուրբ Հոգին ճշմարտության հոգին է, ուրեմն Նա է, որ սրբերին առաջնորդում է «իսկական ճշմարտության»[28]: Հոգեգալստի օրը Սուրբ Հոգին նախ առաքյալների հոգուց պատռել-հանել է «չարության վարագույրը», մաքրել նրանց կրքերն ու բացել «նրանց սրտերի աչքերը», եւ միայն այդ ժամանակ «նրանք, լցված իմաստությամբ եւ հաստատված Սուրբ Հոգուց, Նրանից սովորեցին կատարել Աստծո կամքը. Տիրոջ Հոգին էր, որ նրանց դեպի ամենաճշմարտություն էր առաջնորդում, որովհետեւ նրանք (առաքյալները-ծնթ. թրգմ.) արդեն իրենց հոգիների լիիրավ տերերն ու կառավարողներն էին[29]»: Սրբազան Ճշմարտության խորհուրդները հասկանալու համար մարդը նախ պետք է սրբագործի իր իմացության բոլոր օրգանները, հանի հին մարդուն՝ Ադամին, եւ հագնի նորին՝ Քրիստոսին[30], Նրանով ձեռք բերի «հավելյալ աչք, գլուխ, ականջ եւ ձեռք ու ոտք[31]», որովհետեւ «գոյություն ունեն ուրիշ աչքեր ու ականջներ, ուրիշ արցունքներ, բայց նաեւ՝ մեկ այլ միտք ու հոգի, եւ Սուրբ Հոգին է՝ Աստված ինքնագո եւ երկնային, որ հասկանում եւ արտասվում է, աղոթում ու ճանաչում, եւ որն Աստծո խոսքն է իրականացնում ճշմարտության մեջ»[32]:

Հոգեկիր անձը քաջ գիտե, որ ինքն ունի «ուրիշ աչքեր՝ իր աչքերում, տարբեր լսողական օրգաններ՝ իր լսողական զգայարաններում»[33]: Հոգեկիր քրիստոնյաները, հետեւաբար, «մի այլ միտք» ունեն, որովհետեւ «Աստծո Հոգին հաղորդակցվում է նրանց հոգիների հետ»[34]: Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, եկավ՝ «փոխելու մարդկային բնությունը, վերափոխելու, զորացնելու եւ վերստեղծելու այդ հոգին, որն ադամական անկումից հետո ջախջախվել էր կրքերով, խառնելու այդ հոգին Իր աստվածության Հոգուն: Նա եկավ մի նոր միտք շնորհելու, նոր հոգի եւ նոր աչքեր, նոր ականջներ, նոր հոգեւոր լեզու եւ իրեն հավատացողներին պարզապես նոր մարդ դարձնելու»[35]: Այս կերպ վերափոխված անձի մեջ կարող ենք հստակորեն նշմարել, խորհուրդի ընդմեջէն, Աստծո իմաստության գործը[36]:

Սուրբ Մակար Մեծն ըստ այս սկզբունքի է դիտարկում քրիստոնեական իմացաբանությունը, թե՝ «նմանը ճանաչում է նմանին»: Ահա թե ինչու, ըստ նրա, «Աստվածության երկնային Հոգին ունեցողը ճանաչում է Իր նմանին, ինչպես ասում է Պողոս առաքյալը՝ հոգեւոր բաներ խոսելով հոգեւոր մարդկանց համար»[37]: Քրիստոնեական

26 Ճառ ԼԲ 7, PG 36, 737 C:
27 Ա Կորնթ. Բ 11, ինչպես նաեւ Յաղագս սիրոյ ԺԱ, PG 36, 917 B:
28 Թուղթք, PG 36, 417 B:
29 Յովհ. ԺԵ 26, ԺԶ 13 եւ «Յաղագս սիրոյ», 917 B:
30 Անդ, 917 C:
31 Կող. Գ 9-10:
32 Ճառ Բ 2, 464 C:
33 «Յաղագս սիրոյ» ԺԱ, 917 B:
34 Ճառ ԻԸ 5, 713 A:
35 Ճառ ԻԵ 9, 581 B:
36 Ճառ ԼԴ 1, 780 A:
37 «Յաղագս սիրոյ» ԻԳ, 928 A:

իմացաբանության խորհուրդը Քրիստոսի հետ մեկ Հոգի[38] դառնալու իրականության մեջ է կենտրոնանում, քանզի միայն այս կերպ է հնարավոր ճանաչել Քրիստոսի աստվածամարդկային անձի սքանչելի խորհուրդը[39]: Յուրաքանչյուր ոք, ով «համայն ընկալմամբ եւ գիտությամբ հաղորդակցվում է Մխիթարիչ Սուրբ Հոգուն», ձեռք է բերում «կրքերի իսպառ բացակայության կատարյալ հասակ»[40] եւ արժանի դառնում իր մաքրված հոգու մեջ «Սուրբ Երրորդության բնակության»: Այս կերպ միայն նա կարող է ապրված ձեւով ձեռք բերել հավերժական ճշմարտության գիտությունը[41] եւ «քրիստոնեության կատարյալ հասակը»[42] հասկանալու ու ընկալելու կարողությունը: Ահա այս նոր անձնավորությունն է մուտք գործում դրախտային երջանկություն, որտեղից նրան դուրս էր հանել մեղքը[43], քանզի երկնային երջանկությունը կարող են ձեռք բերել միայն նրանք, «ովքեր Հոգու երկնային խորհուրդների առաքինի եւ սրտառուչ հաճախումով ու մտահայեցությամբ ստանալով գիտությունը տիրանում են երկնային քաղաքացիությանը»[44]: Սրանք են, որ կարող են տեսնել այն, ինչ չի տեսել աչքը, լսել՝ ինչ չի լսել ականջը, իմանալ՝ ինչ չի մտել մարդու սիրտը. սրանք են, որ «իմաստուն են ճշմարտության մեջ, հզոր, ազնիվ ու խելացի»[45]:

Սուրբ Հոգին իր լույսով ողողում է հոգեկիր անձերի ամբողջ հոգին: Սուրբ Մակարն այսպես է նկարագրում այդ լուսավորումը. «Սուրբ Հոգու լուսավորումը միայն շնորհի լույսի եւ նշանակության հայտնությունը չէ, այն նաեւ առանձնավորական լույսի ուժեղ եւ հարակա լուսավորությունը»[46]:

Սուրբ Հոգու զորությամբ «ամենայն գիտություն հայտնվում է եւ Աստված ճանաչվում է ճշմարտության մեջ»[47]: «Բոլոր նրանք, ովքեր լուսո որդիներ են եւ Նոր Ուխտի ծառաներ Սուրբ Հոգով, մարդկանցից սովորելու ոչինչ չունեն, որովհետեւ նրանք արդեն իսկ աստվածուսույցներ են»[48]: Նրանց սրտերում Աստծո շնորհը «փորագրում է Հոգու օրենքը եւ երկնային խորհուրդները»: Նրանք «բռնված են» աստվածային շնորհից, եւ այն անցնում է նրանց մարմնի բոլոր անդամներով՝ թագավորելու բոլոր խորհուրդների ու անդամների վրա»[49]: Երբ նրանք դառնում են շնորհի խողովակներ, այդժամ այս աղբյուրներից բխում է մի այնպիսի գիտութ-

38 Ա Կորնթ. Բ 13, տե՛ս նաեւ Ճառ Թ 8, 536 D:
39 Ա Կորնթ. Զ 17:
40 Հմմտ. «Յաղագս սիրոյ» ԻԴ, 928 B:
41 «Յաղագս սիրոյ» ԻԶ, 929 A:
42 «Յաղագս սիրոյ» ԻԸ, 929-932 B:
43 Անդ: Հմմտ. «Մտքի ազատության մասին» ԻԱ, 956 A. «Սրբազան առաքյալ Պողոսն ամեն հավատացյալ հոգու ամենաճշգրիտ եւ խորաթափանց կերպով արդեն հայտնել է քրիստոնեության խորհուրդների ամբողջությունը, որ է՝ աստվածային զորությամբ ընթանալ դեպի փորձառություն, այսինքն՝ Հոգու զորության եւ Հայտնության մեջ ծագող երկնային լույսով դեպի պայծառություն» (հմմտ. Ա Կորնթ. Բ 4, Եփես. Ա 17, Գ 3):
44 Ճառ ԼԷ 7, 753 D:
45 Փիլ. Գ 20, տե՛ս նաեւ «Յաղագս սիրոյ» ԺԷ, 921 D:
46 Ա Կորնթ. Բ 9, «Յաղագս սիրոյ» ԺԷ, 921 D:
47 «Մտքի ազատության մասին» ԻԲ, 956 D: Հմմտ. «Յաղագս սիրոյ» ԻԱ-ԻԲ, 925 B:
48 Անդ, ԻԳ, 957 B: Հմմտ. Անդ, ԻԴ, 957 B, «Յաղագս սիրոյ» ԻԶ, 929 B:
49 Ճառ ԺԵ 20, 589 A:

յուն, որը միակն է՝ Աստծո խորհուրդներն ըմբռնել կարողանալու համար: Այսպիսով, անհնար է «առանց Աստծո եւ առանց նրա պարգեւած զորության հաղորդակցվել աստվածային խորհուրդներին, ճանաչել Աստծո իմաստությունը եւ հարստանալ ըստ Սուրբ Հոգու»[50]: Մեր Տեր Հիսուս Քրիստոս ինքն է, որ «գիտության լույսով»[51] օծում է հոգեկիր անձանց եւ սփռում նրանց վրա «կյանքի գինին՝ Հոգու նոր ուսմունքը»[52]: Այս հոգեւոր անձերը գաղտնաբար սպանում են «այն ուսմունքը, որին նրանք ծանոթ չէին մինչ այդ»[53]:

Հավերժական Ճշմարտության գիտությունն ուղղակիորեն սահմանված է Աստվածամարդու՝ Քրիստոսի պատմական անձով. «Քանզի Նա է առանձնավորված իրական ճշմարտությունը, եւ առանց դրա անհնար է ճանաչել Ճշմարտությունը կամ ձեռք բերել նրա փրկությունը»[54]:

Առանց մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի անձի ներկայության եւ առանց Նրա՝ մեր կյանքին ունեցած մասնակցության, մարդկային միտքը դատապարտված է անելանելի թերահավատության: Միայն Քրիստոսին հավատացողները կարող են մոտենալ Ճշմարտության գիտությանը, «որովհետեւ այդ Ճշմարտությունը միայն նրանց է հայտնվում եւ հենց նրանց ուսուցանելու համար է ասում՝ «Ես եմ Ճշմարտությունը»[55]:

Ճշմարտությունը սիլլոգիզմի կամ էլ բնազանցական հայեցակարգի ընկալածը չէ. այն հավիտենական անձ է: Ճշմարտությունը նույնացվում է Անձի հետ, որը կարող է հայտնվել միայն մաքրագործված անձանց. «Այս ճշմարտությունը (Քրիստոս) հայտնվում է միայն հավատարիմ հոգիներին» եւ նրանց հետ «Նա մեկ եւ միակ հաղորդություն է կազմում»[56]: Տերը «հայտնվում է նրանց հոգիներին եւ ուսուցանում Սուրբ Հոգու բնակության մասին»[57]: Քրիստոս՝ անձնավորված Ճշմարտությունը, մարմնավորվում է Քրիստոսի բարեկամ մարդկանց հոգիներում, որով վերջիններս «իրենք իրենց մեջ կրում են Քրիստոսի լույսը»[58], այսինքն՝ «նրանց սրտերում փայլող Տիրոջը եւ Նրա հետ միասին նաեւ՝ Տիրոջ Իմաստությունը»[59]: Քրիստոսի մեջ եւ Քրիստոսով է, որ նրանք Սուրբ Երրորդության մեջ գտնում են գիտության եւ իմաստության գանձերը[60]:

Երբ մարդու հոգին միավորվում է Քրիստոսի հետ եւ երբ «նա միախառնվում է Աստվածության լույսին»[61], այդ ժամանակ նա «սպանում է լույսի հոգին, այսինքն՝

50 Անդ, 589 A-B:
51 «Մտքի ազատության մասին» ԺԵ, 904 B:
52 Ճառ ԼԴ 1, 780 B:
53 Անդ, 2, 780 B:
54 Ճառ ԺԲ 17, 568 C:
55 «Մտքի կարեւորության մասին» 20, 568 C:
56 Յովհ. ԺԴ 6, Ճառ ԺԲ 17, 568 C:
57 Ճառ ԺԲ 18, 569 A:
58 Անդ:
59 «Յաղագս սիրոյ» Զ, 912 C: Հմմտ. նաեւ Ճառ ԺԴ 2, 572 A :
60 Ճառ ԺԸ 1, 636 A:
61 Անդ, 2-6, 636 B-637 D:

Սուրբ Հոգու զորությունը»[62] եւ «չարության սրվերից անցնում Քրիստոսի լույսին»[63]: Այսպիսով, Քրիստոս՝ «համապարփակ լույսը»[64], կենտրոնանում է մարդու՝ Աստծո պատկերով ստեղծված էության մեջ, որով մարդը կարողություն է ձեռք բերում «լույս»[65] եւ «ամբողջությամբ աչք դառնալու»[66]:

Երբ Քրիստոսի լույսը, «հայտնվելով մարդու սրտում, ամենաթաքնված ու ներքին հոգեկան աշխարհի ծալքերը լույսով է ողողում, ահա այդ ժամանակ մարդը, ամբողջ էությամբ այդ քնքշության ու մտահայեցության մեջ ընկղմված, դադարում է ինքն իր Տերը լինելուց եւ այս աշխարհի համար դառնում խենթ ու բարբարոս՝ այդ սիրո ու առատ քնքշության եւ բոլոր թաքնված խորհուրդների շնորհիվ: Ահա այսպիսի պահերին է մարդ, կատարելության վերջնագծին հարելով, հասնում ազատության, որովհետեւ նա այլեւս ամեն մեղքից սրբված ու ազատագրված է դառնում»[67]: Մտահափշտակությունն աղոթքի ժամանակ մեծ նշանակություն ունի: Հաճախ «ներքին մարդն աղոթքի ժամանակ ցնծում է եւ հափշտակվում վերերկրայինի ահռելի խորությամբ»[68]:

Առանց ի Քրիստոս կյանքի մեզ երբեք չի կարող տրվել Քրիստոսի աստվածամարդկային խորհուրդների գիտությունը: Այն ձեռք բերելու համար մարդը կարիք ունի Քրիստոսի լույսի, քանզի Քրիստոս եկավ «մարդուն Իր սեփական լույսով լուսավորելու եւ Իր աստվածության երկնային զգեստներով զարդարելու»[69]: Առաքյալներն այս ամենի ամենացայտուն օրինակն են: Նրանք Քրիստոսով համայն աշխարհի համար դարձան Քրիստոսի աչքն ու լույսը[70]: «Հոգեպես աստվածային լույսով լուսավորվելով՝ հավատարիմ եւ արժանի հոգու աչքերը տեսնում եւ ճանաչում են բարի եւ ճշմարիտ Ընկերոջը, սիրատոչոր Փեսային, հոգու Տիրոջը, ով արժանի է Սուրբ Հոգով երկրպագության»[71]: Այդ աչքերն են տեսնում «այդքա՜ն տենչալի գեղեցկություն, որն անհնար է սահմանել բառերով»[72]:

Ըստ Սուրբ Մակարի վարդապետության՝ այդ գիտությունն ընդգրկում է զարգացման երեք աստիճաններ. «Ընկալում (αἴσθησις), այնուհետեւ տեսություն (ὄρασις), եւ վերջապես՝ լուսավորություն (φωτισμός)»[73]: Գիտության ենթական այս վերջին աստիճանին կարող է հասնել միայն այն ժամանակ, երբ նրա միտքը պայծառացած է Քրիստոսի եւ Սուրբ Հոգու լույսով[74]: Մաքրվելով եւ լուսավորվելով՝

62 Ճառ Ա 7, 457 B:
63 Անդ, 6, 456:
64 Գործք Առաք. ԻՁ 18, Իմաստ. Սող. Ե 8, Ճառ Ա 7, 460 A:
65 «Յաղագս համբերութեան եւ ընտրութեան» 1, 865 C:
66 Ճառ Ա 2, 452 A, հմմտ. «Յաղագս համբերութեան եւ ընտրութեան» 4, 453 B:
67 Անդ, 2, 452 A:
68 Ճառ Ը 3, 520 C: «Յաղագս սիրոյ» 9, 916 C:
69 «Յաղագս սիրոյ» 8, 916 A:
70 Ճառ ԼԴ 2, 745 A:
71 Մատթ. Ե 14, Ճառ Ա 4, 453 C:
72 Ճառ ԻԸ 5, 713 B, 4, 713 A:
73 Անդ, 714 B:
74 Ճառ Է 5, 525 D:

միտքը վերադառնում է իր նախնական մաքրությանը, ձեռք բերում «իր սեփական բնությունը» եւ ստեղծում մաքուր ու անբիծ գիտություն[75]: Այդ միտքը կարող է տեսնել «Տիրոջը եւ հայել Նրա փառքը, որին ականատես էր նաեւ Ադամն իր անկումից առաջ»[76]: Մտքով մաքրագործված մարդիկ «բերկրում են գալիք դարում, հայում ու սքանչանում են վերերկրային գեղեցկությամբ եւ հրաշքներով[77]: Նրանք, օգտագործելով իրենց մաքրագործված ու լուսավորված միտքը, շարունակաբար խորամուխ են լինում Տիրոջ փայլի մեջ»[78]: Աստծո պատկերով ստեղծված եւ ամեն մեղքից մաքրված էությամբ սրբերը կարող են արդեն այս կյանքում տեսնել Քրիստոսի անեղ փառքը, որովհետեւ Քրիստոս «կարող է բացահայտվել հոգու աչքերի կողմից նույնիսկ մեռելների հարությունից առաջ»[79]:

Մտքով կատարելապես մաքրագործված եւ սուրբ մարդն աղոթքի շնորհիվ պահպանում է մտքի սուրբ մաքրությունը եւ, բերկրանքով լցված, կարող է տեսնել «երկնային Երուսաղեմը եւ այնտեղի լուսավոր օթեւանները, ինչպես նաեւ մեծ ու սքանչելի լույսը»[80]: Սուրբ Հոգու աստվածային եւ աննյութական կրակը «մաքրում է հոգին, որպեսզի, ընկալելով այն, ինչը կարելի է տարբերել ըստ բնության, այն կարողանա շարունակաբար ականատես լինել Տիրոջ հրաշքներին»[81]: Այսպես է, ահա, որ հատվում են գիտակցության սահմանները, եւ «Աստծո մեծամեծ խորհուրդներն ու խոսքերը հայտնվում են հոգուն»[82]:

Աստծո պատկերով ստեղծված հոգու անսահմանությունը մեղքի ներքին եսասիրությունից կարող է ազատագրվել միայն բարոյական եռյակի եւ Սուրբ Երրորդության միջեւ առկա համագործակցությամբ[83]: «Հոգին կասեցնող մեղքի պատնեշները»[84] քանդվում են «Աստծո զորությամբ, եւ Սատանան դադարում է գիտության հնարող լինելուց[85]:

Վերանորոգված անձնավորությունն իբրեւ գերագույն գիտության աղբյուր Աստծուց ստանում է Հայտնություն. ահա թե ինչու գիտությունը գրեթե սահմաններ չունի: Աստված փարթամացնում եւ կատարելագործում է հոգին անսահման եւ անչափելի մի գիտության մեջ, մինչեւ որ այն հասնում է իր բնական չափին»[86]: Հենց այս պատճառով է, որ Աստված, գիտակցության ոլորտում, նրան կարելիություն է տալիս «անսահման եւ անչափելի» մի աճի: Ավետարանական պատգամը, թե՝ «Կատարյա՛լ եղեք, ինչպես որ ձեր երկնավոր Հայրն է կատարյալ», կիրարկելի է նաեւ

75 Անդ, հմմտ. Ճառ ԻԵ 9, 673 B:
76 «Մտքի կարեւորության մասին» 13, 901 AB:
77 Ճառ ԼԵ 1, 785 D:
78 «Մտքի կարեւորության մասին» 13, 901 B:
79 Անդ:
80 Ճառ Բ 5, 468 A:
81 «Մտքի կարեւորության մասին» 20, 905 C:
82 Ճառ ԻԵ 10, 673 C:
83 Ճառ Զ, 5, 525 D:
84 Ճառ ԻԵ 1-3, 668:
85 Ճառ Ծ 3, 817 C:
86 Անդ:

գիտության համար: Քրիստոսակիր հոգին «այնքա՛ն հասունացած է մտածումով եւ մտքով, որ ամենուրեք է եւ միշտ այնտեղ, որտեղ պետք է ծառայել Քրիստոսին»[87]: Բայց գիտակցության այս հասունացումն իրականում ունի եկեղեցական, ընդհանրական բնույթ, որովհետեւ միայն սրբերի հետ մարդ կարող է ճանաչել Քրիստոսի խորհուրդները[88]: Եւ եթե պատահում է, որ Տերն ու մարդու հոգին «մեկ հոգի, մեկ միախառնում եւ մեկ մտածում»[89] են կազմում, այդ ժամանակ ահա Տերը հոգուն շնորհում է աստվածամարդկային գիտություն: «Տե՛ս անքննելի խորհուրդները հոգու, որից Տերը հեռու է վանել նրան պատած ստվերը, որպեսզի ցույց տա, թե նրա մտքերն ինչպես կարող են հասնել տեսանելի եւ անտեսանելի արարչության լայնքին, երկայնքին ու խորությանը»[90]:

Քրիստոսակիր անհատը, մարդկանցից յուրաքանչյուրի մեջ նկատելով նրան ծածկող մեղքերի առատությունը, մտահայում է Աստծո պատկերով ստեղծված իր սեփական բնությունը, Քրիստոսի կերպը կրող իր սեփական անձը: Նա «նրանց բոլորին էլ նայում է մաքուր աչքով եւ ցանկանում նրանց բոլորին էլ սիրել ու հարգել՝ առանց բացառության՝ հույն թե հրեա»[91]: Այդ անհատն իբրեւ հոգեմտավոր նպատակ ունի ճանաչել Քրիստոսին եւ Աստծո պատկերը, այսինքն՝ Քրիստոսինը, որի համաձայն արարվել են բոլոր մարդիկ, եւ այս պատճառով է, որ «Նրա միտքը թվացյալ երեւույթներով բացառապես չի հետաքրքրվում՝ խուսափելով խորամուխ լինել «այն ամենի մեջ, ինչ ստորին աշխարհին է պատկանում»[92]:

Գիտության առումով ճշմարիտ քրիստոնյաներն ու մնացած մարդիկ մեծապես տարբերվում են[93]: Բարի է ու լավ, որ քրիստոնյաներն իրենց մտքով կարողանում են տեղափոխվել այս աշխարհից դեպի մեկ ուրիշը՝ Ադամի անկումից հետո թակարդի մեջ բռնված լինելով այս աշխարհում: Բարի է ու լավ, որ նրանք իրենց մտքով կարողանում են բնակվել Աստվածության վերին աշխարհում[94]: Բայց «երկնքի ամենավերին մասերը» թռչելու համար հոգին կարիք ունի հոգեկիր դառնալու[95], «Սուրբ Հոգու աղավնու թեւերն»[96] ստանալու: Դրան կարելի է հասնել առանց նախապայմանի Քրիստոսին հանձնվելով. Միակը, ով կարող է «Սուրբ Հոգու թեւերը շնորհել՝ առանց որեւէ խոչընդոտի Աստվածության օդի մեջ սավառնելու»[97]: Երբ հոգին զգեստավորվում է Սուրբ Հոգու թեւերով եւ «ճախրում-հասնում մինչեւ երկնային

87 Ճառ ԽԷ 17, 808 B:
88 Մատթ. Ե 48:
89 Ճառ ԽՁ 4, 796 B:
90 Եփես. Գ 18-19 եւ Անդ, 5, 796 B:
91 Անդ, 3, 793 C:
92 Եփես. Գ 18 եւ Անդ, 5 796 B: Հմմտ. Թուղթք, 412 C:
93 Ճառ Ը 6, 332 C:
94 «Սրտի պահպանության մասին» 3, PG 36, 836:
95 Անդ, 924 B:
96 Հմմտ. Ճառ Ե 4, 497 AB, Ճառ Է 1, 524 C, Ճառ Ե 27, 493 D, «Մտքի կարեւորության մասին» 892 B, «Ցաղագս սիրոյ» 23, 925 D:
97Ճառ ԻԴ 1, 661 D: Հմմտ. «Ցաղագս սիրոյ» 17, 924 D:

բարձունքները», այնժամ հասկանում է, որ բոլորից ավելի բարձր է կանգնած[98]:

Ահա թե ինչպես քրիստոնյաները կարող են «իրենց՝ աշխարհից ավելի մեծ եւ ուժեղ դրսեւորել, երբ նրանց միտքն ու հոգին հարատեւում են Քրիստոսի խաղաղության եւ Սուրբ Հոգու սիրո մեջ»[99]: Ահա այսպես են քրիստոնյաները դառնում «հաղորդակից հոգեւոր գանձին եւ մասնակից այն իմաստության, որի մասին միայն գաղտնի են խոսում, եւ որն այս աշխարհից չէ»[100]: Նրանք ձեռք են բերում «մի ուրիշ հոգի»[101] եւ Քրիստոսի Հոգու մեջ են գտնում իրենց մտքի խաղաղությունը: Եւ որովհետեւ նրանք լուսո որդիներ են[102], կարող են ապրել եւ տեսնել «ապրվածային լույսի օրը»: Ծառայության եւ մեղքի հոգին չէ, որ պատում է նրանց միտքն ու մտածումները, այլ «Սուրբ Հոգու ապրվածային շունչը», որ ներշնչում է նրանց հոգիներին եւ «ներառնում նրանց հոգու առանձնավորությունը, նրանց մտածումները, նրանց մարմնի բոլոր մասերն ու էությունը՝ ապրվածային եւ անհաս մի հանգիստ նրանց պարգեւելով»[103]:

Սուրբ Հոգու շնորհի մեջ է, որ նրանց միտքը կարող է գտնել «կյանքի՝ իրեն համապատասխանող տեսակը՝ նվաճված երկնային ու ապրվածային մի սիրուց եւ հոգեւոր տռփանքից»[104]: Ապրծո հանդեպ սերը նրանց իմացաբանության համար մեթոդի դեր է կատարում: Նրանց կյանքի բնույթը «մտքի մեջ հարակա Տերն է»[105]: Նրանք իրենց հոգիներում ունեն «հոգեւոր մի գանձ, որը մարմին է դալիս նրանց խոսքերի ու գործերի ամբողջ գեղեցկությանը, ինչպես նաեւ ապրվածային մտքերին ու անհասանելի խորհուրդներին»[106]:

Քրիստոսի մեջ «հավաքել մտքերն ու մտածումները» նշանակում է Նրան հնարավորություն տալ ապրվածամարդկային գիտություն ստեղծելու[107], որովհետեւ Նա է «վերափոխում հոգու խորհուրդները՝ դրանք ապրվածային, երկնային ու գեղեցիկ դարձնելու համար»[108]: Սուրբ խորհուրդներից՝ սուրբ գիտության. այս է ստեղծում անձին, ով «իր մտքի մեջ կրում է…Սուրբ Հոգու զորությունը»[109]: «Նրա բոլոր խորհուրդները երկնային են դառնում, մաքուր ու սուրբ՝ շրջանառվելով ապրվածային մթնոլորտում»[110]:

Մաքուր խորհուրդները միակն են, որ բնական են եւ ապրվածային[111], այնինչ անմաքուր խորհուրդները հակաբնական են: Ահա թե ինչու «Ապրծո աչքը նրանց

98 Ճառ ԼԴ 2, 781 C:
99 Ճառ Բ 3, 465 A:
100 Ճառ ԽԷ, 797 B: Հմմտ. Ճառ Ե 11, 516 BC:
101 Ճառ Լ 6, 725 B:
102 Ճառ Ե 4, 497 B:
103 Ճառ Թ 7, 536 C: Հմմտ. ԺԸ 2-6, 636 B-637 A:
104 Ճառ Ե 11, 516 D:
105 Ա Թեսաղ. Ե 5:
106 Ճառ Բ 4, 465 BC: Հմմտ. Ճառ Դ 11, 481 A:
107 Ճառ Դ 16, 484 C:
108 Ճառ Գ 3, 496 B:
109 Ճառ ԺԸ 5, 637 BC:
110 Ճառ ԻԴ 2-3, 664 AB:
111 Ճառ ԼԱ 2, 729 AC: Հմմտ. Ճառ ԼԲ 3, 736 B:

միտքը համարում է իբրեւ անմաքուր մարդկանց խորհուրդ եւ շրջվում ու հեռանում է նրանցից՝ հաղորդակցության մեջ չմտնելու համար»[112]: Տիրոջ Հոգին կրում է մարդկային հոգու երիկամները՝ «ամեն ժամ իմաստությամբ վարելով հոգու կառքը դեպի երկնային եւ աստվածային միտքը»[113]:

Հոգեկիր անձինք պեղում են «երկնային խորհուրդները»[114] եւ հաճախ «հանդես են գալիս արբած վիճակում, որովհետեւ Սուրբ Հոգով ճաշակում են հոգեւոր խորհուրդների աստվածային գինին»[115] եւ «արբում Սուրբ Հոգու անսպգյուտ խմիչքով»[116], ասես նրանց անձի ֆիզիկական մասն այլեւս ոչինչ չի զգում[117]: Նրանք արդեն Աստծուց են սպանում «կա՛մ բժշկության շնորհ, կա՛մ գիտության, կա՛մ էլ հայտնության, եւ հաճախ էլ՝ «աստվածային իմաստությամբ ու գիտությամբ եւ Սուրբ Հոգու անսխալ ուղղությամբ սպանում են Քրիստոսի անունով այնպիսի շնորհներ, որ անհնար է արտահայտել մարդկային լեզվով»[118]:

Այսպիսով, մարդկային իմացությունն իր ամբողջությամբ կախված է Քրիստոսից եւ Սուրբ Հոգուց: Ավետարանական խոսքերը, թե՝ «առանց ինձ ոչինչ չեք կարող անել»[119], կիրառելի են նաեւ գիտության պարագայում: Երբ մարդն իր միտքն ու խորհուրդները հանձնում է Քրիստոսին, «այնժամ Քրիստոս այդքան սրբության ու մաքրության դիմաց արժանացնում է այդ խորհուրդներին եւ երկնավոր կերակրի ու հոգեւոր ըմպելիքի»[120]: Առանց Տեր Հիսուսի եւ Սուրբ Հոգու աստվածային շնորհի էներգիայի մենք ոչինչ չենք կարող իմանալ Աստծո իմաստության եւ խորհուրդների մասին[121]:

Քրիստոսակիր եւ հոգեկիր անձինք են արարում ճշմարիտ քրիստոնեական փիլիսոփայությունը: «Ճշմարիտ իմաստուններ եւ Աստծո փիլիսոփաներ» կարող են դառնալ միայն նրանք, ում համար «աստվածային իմաստությունը, ըստ ներքին մարդու, ուղեցույց եւ հովիվ է»[122], այնինչ հույն փիլիսոփաները միայն ու միայն անհասկանալի խոսքեր են ուսուցանում[123]. նրանք նախանձախնդրորեն մարզվում են եւ նախապատրաստվում խոսքի ու ճառերի դարձվածքներին եւ ճկունությանը: Իսկ Աստծո ծառաները, չնայած խոսքի մեջ վարպետացած չեն, զգեստավորված են աստվածային գիտությամբ եւ շնորհով»[124]: Քրիստոսի մեջ ապրող ճշմարիտ հոգե-

112 Ճառ ԻԷ, 12, 701 C:
113 Ճառ ԽԹ 3, 813 C:
114 Ճառ ԺԵ 26, 593 A:
115 Ճառ ԺԲ 2, 557 B:
116 Ճառ Ա 9, 460 B: Հմմտ. նաեւ «սուրբ հոգիներն առաջնորդվում եւ ուղղություն են սպանում Քրիստոսի Հոգուց, ով փիրում է նրանց երիկամներին, նա նրանց գտանում է այնտեղ, ուր ինքն է ուզում, երբ ինքն է ուզում՝ դեպի երկնային ու աստվածային մտքերը» (Անդ):
117 Ճառ ԺԵ 4, 604 D:
118 Ճառ ԺԸ 2, 610 B:
119 «Ցաղագս սիրոյ» 6, 912 D : Հմմտ. Անդ, 15, 921 A:
120 Անդ:
121 Ճառ ԼԵ 7, 792 B:
122 «Ցաղագս սիրոյ» 6, 913 B:
123 Հովհ. ԺԵ 15:
124 Ճառ ԺԴ 3, 572 BC:

կիր փիլիսոփան հաճախ «իմաստնանում է անճառելի մի իմաստության եւ գիտության շնորհով ու անհասանելի Հոգու գիտությամբ՝ արտահայտելու համար այն, ինչ անհնար է արտահայտել մարդկային բերանով ու լեզվով»[125]:

Սուրբը միակ ճշմարիտ փիլիսոփան է, որովհետեւ «նա, ով կատարյալ սրբության մեջ է, երբեք չի զբաղվում չարությամբ եւ չի մտածում ունայնության մասին»[126]: Եւ որովհետեւ նրանք դառնում են, ձեւավորվում ըստ Աստծո պատկերի, սուրբերը ձեռք են բերում Աստվածային ճշմարտության գիտությունը, քանզի երկնային եւ աստվածային Հոգին բնակվում է նրանց մտքում, այնինչ մարդկային մտքի փիլիսոփան չի կարող ձեռք բերել բացարձակ եւ ճշմարիտ գիտություն: Սուրբ Մակարը գրում է. «Արիստոտելը կամ Պլատոնն ու Սոկրատեսը, ովքեր օժտված էին խորաթափանց գիտությամբ, նման էին մեծ քաղաքների եւ չունեին թշնամիներ, այսինքն՝ չար ոգիները նրանց դեմ չէին պատերազմում, որովհետեւ Աստծո Հոգին նրանց մեջ չէր բնակվում»[127]:

Նորկտակարանյան՝ մեզ տված գիտության մեթոդը Սուրբ Հոգու շնորհով Քրիստոսի հետ խորապես անձնական ապրումի միությամբ է պայմանավորված: Այս մեթոդը դրսեւորվում է հատկապես Սուրբ Հաղորդության խորհուրդի մեջ: Այստեղ հավատի եւ գիտության օբյեկտն է միավորվում սուբյեկտի հետ: Այսպիսով Սուրբ Մակարը կարողանում է հետեւյալ ձեւակերպումն անել. «Տերը մարմնացավ նույնիսկ կերակրի եւ խմիչքի մեջ... քանզի ասաց. «Ես եմ հացն կենաց »[128]: Ով ուտում է այս հացը, կապրի հավիտյան, որպեսզի հանգստացնի իր հոգին եւ այն լցնի հոգեւոր խնդությամբ»[129]: Եկեղեցու սուրբ հայրը մի այլ տեղ գրում է. «Հացն ու գինին Եկեղեցում մատուցվում են իբրեւ Քրիստոսի մարմնի եւ արյան նախատիպ, եւ նրանք, ովքեր սնվում են հացի այդ հայտնությունից, հոգեւորապես ճաշակում են Տիրոջ մարմինը»[130]: Սուրբ Հաղորդությամբ Քրիստոս միանում է Իրեն ճաշակողի հետ, իսկ վերջինս էլ իրական կերպով ձեռք է բերում Քրիստոսի կյանքն ու գիտությունը[131]:

Սուրբ Մակարը նշում է, թե՝ «Տերը ոչ սահման է ճանաչում, ոչ էլ բացատրություն:Ոչ ոք չի կարող լիովին ըմբռնել եւ չափել Աստծուն, եթե ոչ նա, ով ճաշակել է Տիրոջը եւ խոստովանել իր մարդկային թուլությունը»[132]: «Աստծո ճաշակումը» ճանապարհ է, որ մեզ տանում է Աստծո ճշմարիտ գիտության[133]: Առանց Սուրբ Հաղորդության եւ առանց Քրիստոսի մարմինն ստանալու հնարավոր չէ աստվածամարդկային Նրա Անձի խորհուրդը ճանաչել: Բայց միայն այսպես է, որ Նա՝ Խաչյալն ու Հա-

125 Ճառ ԺԷ 10, 629 C:
126 Անդ:
127 Անդ:
128 «Մտքի կարեւորության մասին» 15, 904B:
129 Ճառ ԺԸ 9, 640 D:
130 Թուղթ, 416 A:
131 «Մտքի ազատության մասին» 25, 958 C: Ըստ Գրիգոր Պալամայի՝սուրբերն «Աստծո պատկերի համաձայն են դառնում Սուրբ Հոգու մասնակցությամբ» (տե՛ս «Առ Թեոփանես», PG 151, 956 B) : Հմմտ. անդ, 957 C:
132 Ճառ ԼԲ 1, 769 C: Հմմտ. Ճառ ԺԷ 1, 624 C:
133 Հովհ. Զ 35 եւ Ճառ Դ 12, 481 B:

րուցյալը, «Աստծո իմաստությունն ու զորությունը» նաեւ «հիմարություն է հույների համար»[134]: «Քրիստոնեության կատարյալ խորհուրդը» ճանաչելի է միայն փորձառության շնորհիվ[135]՝ Քրիստոսի մարմնի իրականության՝ Սուրբ Հաղորդության մեջ. «Քանզի քրիստոնեությունը հաց ու ջուր է, եւ ինչքան ավելի շատ ենք սնվում նրանով, մեր միտքն այնքան ավելի է ըղձում նրա քաղցրությունը, որովհետեւ այն չի կարող կշտանալ ու հագենալ. նա ցանկանում է միշտ ճաշակել՝ առանց հագենալու»[136]:

Սուրբ Հաղորդության մեջ Քրիստոսին միանալով՝ հավատացյալն այն ընդունում է իբրեւ գիտության եւ ճշմարտության չափանիշ: Մերկ մարդու փոխարեն Աստվածամարդն է դառնում գիտության չափանիշը: Երբ հոգու աչքը՝ միտքը, այլեւս մեկ հոգի է դառնում մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի հետ[137], այդ ժամանակ ահա նա կարողանում է տարբերել չարն ու բարին, ճշմարտությունն ու կեղծիքը[138]: Միայն կա-

134 Հովհ. Զ 58: Հմմտ. անդ:

135 Ճառ ԻԷ 17, 705 B: Դիտարկելով Սուրբ Մակարի կողմից «անտիտիպ» եզրի կիրառությունը՝ E. Steitz-ը եզրակացնում է, որ Սուրբ Հաղորդության մեջ Տիրոջ մարմնի եւ արյան մասին Սուրբ Մակարի ուսմունքը խորհրդանշական (symbolische) բնույթ ունի (հմմտ. Die Abendsmahlslehre der Grieschichen Kirche, 1865, էջ 70, 150-151): Սակայն Ա. Հառնակը ցույց է տալիս, որ այս տեսությունը քննություն չի բռնում եւ չի համապատասխանում Սուրբ Մակարի ուսմունքին (հմմտ. Gogmengeschichte II, B, էջ 29, **Մակար Եգիպտացի**, Ճառ ԻԷ 17): Կաթոլիկ աստվածաբանության բառարանում (Dictionnaire de Théologie catholique) «Սուրբ Հաղորդությունն ըստ Եկեղեցու Հայրերի» հոդվածում Vacant-Mangenot-ն Սուրբ Մակարի գործածած «անտիտիպ» եզրի համար նկատում է. «Մակար Եգիպտացին իր քարոզներից մեկում մի կարճ նախադասությամբ մեզ սովորեցնում է, որ «անտիտիպ» եզրը պետք է հասկանալ իբրեւ իրականությամբ լի մի խորհուրդ (symbole), հացի տեսքով մեզ հայտնվող եւ թաքնված իրականություն, որը հոգեւոր կերպով ճաշակում ենք իբրեւ Տիրոջ մարմինը»: Սուրբ Մակարն ինքը Սուրբ Հաղորդությունն անվանում է «Տիրոջ մարմնի եւ արյան ատվածային խորհուրդ» («Յաղագս սիրոյ» 29, PG 134, 932): Հատվածի կարեւորության համար այն մեջբերենք ամբողջությամբ. «Տեսանելի (Զինվորյալ) եկեղեցում, եթե նախապատրաստական կերպով չեն արվել ընթերցումները, սաղմոսերգություններն ու շարականները եկեղեցական պարտ ու պատշաճի համաձայն, քահանայի համար անհնար է Քրիստոսի մարմնի եւ արյան ատվածային խորհուրդն իրականացնել: Այնուհետեւ, եթե նույնիսկ եկեղեցական բոլոր կանոններն ըստ պատշաճի են արված, բայց չկա քահանայի՝ ընծայաբերմանն ուղղված խորհրդավոր հաղորդակցությունը եւ հաղորդությունը Քրիստոսի մարմնին, ուրեմն եկեղեցական ծիսակարգը չի իրականանում եւ բացակայում է խորհուրդի պաշտամունքը: Ահա այսպե՛ս եմ ես հասկանում քրիստոնյայի բարեպաշտական պարտականությունները: Եթե պահք ենք բռնել, հսկում եւ սաղմոս ենք քաղել, ինչպես նաեւ բարեպաշտական բոլոր պարտականություններն ենք կատարել, բայց ըստ ամենայնի հոգեւոր ընմբռնման ու ընկալման Սուրբ Հոգու շնորհալի ներգործությունը չի իրականացել մեր սրտի խորանի վրա, վերոնշյալ բոլոր ճգնակեցական վարժությունները մնում են անօգուտ եւ անավարտ, որովհետեւ դրանք չունեն Սուրբ Հոգու հաճությունը, ով խորհրդազգած կերպով ներգործում է մեր սրտում»: Իր բժշկած մի կնոջ Սուրբ Մակար Մեծը խորհուրդ է տալիս. «Երբեք հեռու մի՛ մնա Եկեղեցուց, Քրիստոսի խորհուրդների հաղորդությունից, որովհետեւ այն, ինչ այսօր պատահել է քեզ, քո՝ հինգ շաբաթ շարունակ մեր Տիրոջ ամենասուրբ խորհուրդներից հեռու մնալու պատճառով է եղել» (տե՛ս **Paixade**, Historia lausiaca, XIX-XX, PG 34, 1049 A): «Անտիտիպի»՝ որոշ հայրերի կողմից օգտագործման մասին Հովհաննես Դամասկացին գրում է. «Եթե ոմանք հացն ու գինին Տիրոջ մարմնի եւ արյան ***անտիտիպ*** են անվանել, ինչպես ասում էր Սուրբ Բարսեղը, ոչ թե սրբագործումից հետո, այլ դրանից առաջ են նկատի ունեցել» (տե՛ս «Յամառօտ շարադրութիւն ուղղափառ հաւատոյ» Դ 13, PG 94, 115 C): Հմմտ. **K. Dyobouniotis**, Les mystères de l'Église orthodoxe d'Orient, Athènes, 1913, էջ 97-98:

136 Ճառ Դ 11, 480 D: Ծավալի մեծության պատճառով այստեղ նպատակահարմար չենք համարել թարգմանելու Մակար Մեծի խոսքը՝ մեջբերված հեղինակի կողմից (ծնթ. թրգմն.):

137 Ճառ ԻԷ 17, 685 BC:

138 «Յաղագս սիրոյ» 2-3, 909 AB:

պարյալները կարող են հասնել դրան[139]. ամբողջապես աչք եւ լույս դառնալով, կարողանալով նշմարել չարի ու բարու սահմանները՝ նրանց հոգին զիտե պարբերակել մաքուրն անմաքուրից[140], ասպվածայինը սատանայականից[141]: Ովքեր իրենց մտքի մեջ ունեն Քրիստոսի լուսավորությունը, կարող են մարդու հոգու մեջ ըմբռնել Աստծո եւ Սատանայի գործերի ամբողջ նրբությունը, ընկալել «չարության եւ թշնամանքի բոլոր հնարանքներն ու որոգայթները»[142]: Հետեւաբար, Քրիստոսի կյանքը հնարավորազույնս ձեռք բերելու անհանգըստությունն ունեցողները պետք է նախապես եւ մշտապես իրենց ամբողջ ուշադրությունը կենտրոնացնեն իրենց հոգու՝ հասկանալու կարողությունն ունեցող, տարբերակող եւ առաջնորդող հոդվածի վրա, որպեսզի, դրսից ներմուծված բնական եւ հակաբնական մտածումներն ու խորհուրդները տարբերելուց եւ չարի ու բարու տարբերակման մեջ հմտանալուց հետո[143], կարողանան ապրել առանց տվայտանքների՝ իբրեւ տեսողական օրգան օգտագործելով տարբերակելու իրենց հմտությունը՝ ոչ մի հնարավորություն չթողնելով չարի հնարքներին»[144]: «Անհրաժեշտ է երկարատեւ կռվով պատերազմել, ինչպես նաեւ անտես ու գաղտնի կերպով ցավել եւ քննել մեր մտածումները, մերկացնել մեր խորհուրդները մեր հոգու մեջ՝ չարի եւ բարու տարբերակման նպատակով[145]: Պետք է առանց դադարի եւ նախանձախնդրորեն զորացնել հոգու թուլացած անդամները՝ առ Աստված դարձնելով դրանք, եւ մեր միտքը մշտապես կապել Տիրոջ հետ՝ ըստ Պողոս առաքյալի, նրա հետ մեկ հոգի դառնալով»[146]:

Վերջապես Սուրբ Մակարը հետեւյալ տողերն է արձանագրում՝ իբրեւ եզրակացություն. «Ովքեր կամենում են իրենց քրիստոնեական կյանքն ավարտել կատարելապես, պետք է ամենից առաջ ժրաջան կերպով հոգ տանեն իրենց հոգու գիտության եւ ընտրողական օրգանի նկատմամբ: Իրականում, միայն չարի ու բարու հստակ ընտրության շնորհն ունենալով, ամենաբնական կրքերը հակաբնականներից տարբերակելով է, որ կկարողանանք ուղիղ եւ անզեղջ կյանք վարել: Այսպիսով, այս ընտրության օրգանն աչքի պես օգտագործելով՝ կարող ենք չարի որոգայթներից հեռու եւ անմասն մնալ: Միայն այդ ժամանակ արժանի կդառնանք Աստծո շնորհներն ստանալու եւ Տիրոջն արժանի լինելու»[147]:

Քրիստոսի կողմից սահմանված մարդկային անձի հաստատման տնօրինութ-

139 Ա Կորնթ. Ա 24, «Յաղագս սիրոյ» 1-2, 908C-909A:

140 «Մտքի ազատության մասին» 21, PG 956 A: Հմմտ. «Յաղագս սիրոյ» 21, 23, 925 CD, «Մտքի կարեւորության մասին» 18, 901D-905D, Ճառ ԺԷ 12, 632 AB, «Յաղագս սիրոյ» 12, 920 A:

141 Ճառ ԺԷ 13, 632 C: Հմմտ. Ճառ ԺԴ 3, 472 C:

142 Ա Կորնթ. Զ 17:

143 «Սրտի պահպանության մասին» 6-7, 825 A: Հմմտ. նաեւ Ճառ Զ 3, 520 D. « Պետք է շատ ուշադիր լինել՝ թշնամի զորության կողմից եկող օտարամուտ մտքերը տարբերակել կարողանալու համար»: Տե՛ս նաեւ «Մտքի կարեւորության մասին» 13, 901 B-D, «Հոգու մեջ կատարելության մասին» 13, 849D-852 A, Ճառ ԺԴ, 573 C:

144 Հմմտ. Երր. Ե 14, «Մտքի ազատության մասին» 27, 960 C:

145 Ճառ Ա 24, 452A-453C: Հմմտ. Ճառ Դ 4, 476 A:

146 «Համբերության եւ ընտրության մասին» 13, 876 BD: Հմմտ. նաեւ Ճառ ԼԴ 1, 744 C, «Բանք հարանց» 240 B:

147 Ճառ ԺԵ 49, 609 B:

յան համաձայն ապրվածացման գերագույն ապրիճանը պատկանում է քրիստոնեության Հայրենությանը: Ինչ որ արժեք ունի մարդու անձի համար, կիրառելի է նաեւ նրա գիտության պարագային. մարդու անձի վերականգնումը նրա ապրվածացման գերագույն ապրիճանն է: Այդ վերականգնման ժամանակ այս երկրավոր կյանքի ընթացքում Աստծո պատկերին համապատասխան դարձած հոգին փոխադրում է այն իր ներաշխարհ: Ըստ սուրբ հոր՝ «Սրբերի մոտ Աստծո պատկերով արարված Հոգու պատկերը կարծես կնքված, տպված է նրանց ներսում, իսկ նրանց մարմինը՝ նույնպես ըստ Աստծո պատկերի արարված, արտաքնապես իր վախճանին կհասնի իբրեւ երկնային մարմին[148]: …Ինչ որ հոգին այժմվանից իսկ զանձել, դիզել է իր մեջ, պիտի այդ ժամանակ հայտնվի արտաքնապես՝ մարմնի միջոցով»[149]: «Հոգին Ապրված, որով նրանք արժանի են այդ ամենն ստանալու, կդառնա նրանց համար ամբողջական եւ փայլող գեղեցկությունն ու երկնային շուքը»[150]:

Հարության ժամանակ Հիսուս Քրիստոսի կյանքը հայտնվում է «մահկանացու յուրաքանչյուր մարմնի մեջ»[151]: Քրիստոս մարմնին պարգեւում է ապրվածություն եւ հավերժություն՝ մարմնի եւ հոգու միջեւ կատարյալ հավասարակշռություն հաստատելու նպատակով:

«Ապրվածության երկնային հուրը, որ քրիստոնյաները ներկայումս ստանում են իրենց սրտի ներսում եւ որը գործում է ներկա դարաշրջանում մեր սրտերում, արտաքնանում է մարմնի վախճանի ժամանակ՝ վերաբաղադրելու համար մարմնի անդամները եւ դրանց հարություն պարգեւելով»[152]: Այդ ապրվածային հուրը «հարության զորությունն է»[153], որովհետեւ նա է «հարություն տալիս եւ վերանորոգում ապականված մարմինները»[154]: Մեռելների հարության ժամանակ մարմնի բոլոր անդամները հարություն են առնելու, «մազ անգամ չի կորչելու, եւ ամեն բան լուսավորվելու է»[155]:

Մարդկային անձը կոչված է ոչ թե մեռնելու, այլ հրաշալի լիության մեջ հարություն առնելու, ինչպես ասում է Սուրբ Մակարը. «Պետրոսը Պետրոս էլ մնում է, Պողոսը՝ Պողոս Փիլիպպոսն էլ՝ Փիլիպպոս. բոլորն էլ, մնալով իրենց սեփական բնության եւ առանձնավորության մեջ, լցվում են Սուրբ Հոգով»[156]: Սրբերի մարմինները վերափոխվում են այնպես, ինչպես մեր Տեր Հիսուս Քրիստոսինը. «Ինչպես որ Լեռան գագաթին Տիրոջ մարմինը պայծառակերպվեց եւ փառավորվեց

148 «Համբերության եւ ընտրության մասին» 18, 880 C:
149 Ճառ Ծ 4, 820 B:
150 Երր. Ե 14:
151 «Մտքի կարեւորության մասին» 3, 892 B:
152 Երր. Ե 14:
153 Ա Կորնթ. Զ 17, «Սրտի պահպանության մասին» 6, 825 A, «Հոգու մեջ կատարելության մասին» 13, 849 D, «Թուղթ» 429 B, «Համբերության եւ ընտրության մասին» 13, 876 B, «Մտքի ազատության մասին» 27, 960 C:
154 Ճառ Դ 1, 472 D:
155 «Մտքի ազատության մասին» 25, 957 C:
156 Ճառ Ե 8, 513 B, «Համբերության եւ ընտրության մասին» 29, 889 A, «Մտքի կարեւորության մասին» 2, 892 A, Ճառ Բ 5, 468 B:

աստվածային փառքի ու անսահման լույսի մեջ[157], այդպես էլ կվերափոխվեն ու կպայծառակերպվեն սրբերի մարմինները: Լեռան վրա Քրիստոսի ներքին փառքը վերափոխեց նրա մարմինը եւ պայծառակերպեց այն: Ահա այդպես նաեւ վերջին օրը Քրիստոսի առաքինությունը, որ իրենց ներսում կրում են սրբերը, կտրարածվի նրանց մարմինների վրա: Այժմվանից իսկ նրանք իրենց մտքում մասնակցում են նրա գոյությանն ու բնությանը: Գրված է. «Զի որ սրբէն եւ որ սրբին, ի միոջէ էին ամենեքեան» (Եբր. Բ 11), նաեւ՝ «Եւ եւ զփառսն զոր ետուր ինձ՝ ետու նոցա» (Հովհ. ԺԷ 22)[158]: Ինչպես որ մի փոքրիկ կայծը կարող է բազմաթիվ լամպեր վառել, այնպես էլ սրբերի մարմինները՝ Քրիստոսի մարմնի անդամները[159], պեպք է դառնան այն, ինչ որ է Քրիստոս»[160]: Հոգով ու մարմնով աստվածացված լինելով Քրիստոսի շնորհով՝ բոլոր սրբերը «վերափոխվում են աստվածային բնությամբ, այսինքն՝ շնորհով՝ դառնալով Քրիստոս, աստվածներ եւ Աստծո որդիներ»[161]:

Ահա այսպես է աստվածամարդկային անձը հասնում իր վերջնական նպատակին, այսպես են մարդու մարմինն ու հոգին համապատասխան դառնում Աստծո պատկերին, եւ անձի հավիտենական երանությունը Քրիստոսով եւ նրա աստվածային շնորհով հասնում է իր լիությանն ու Աստծո պատկերի կյանքին եւ գիտությանը:

157 Տես Ե 9, 513 C:
158 Անդ, 513 D, 516 AB:
159 Տես Ե 8, 513 A:
160 Տես ԺԱ 1, 544 B:
161 Տես ԻԵ 10, 57 D: